ՏԵՂԵԿԱԴԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1952. Общественные науки

Ա. Մնացականյան

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ՍԵՎԱՆԻ ԼՃԻ ՑԱՄԱՔԱԾ ՏԵՐԻՏՈՐԻԱՅՈՒՄ

1951 թ. հոկտեմբերին Նոր Բայազետի շրջանի Մուխան գյուղից երկու կիլոմետր դեպի հյուսիս լճի հետ քաշված հրվանդանաձև մի տարածության վրա, որն ունի 5000 մ. լայնություն և 200 մ. երկարություն, հայտնաբերվեցին մեծ թվով դամբարաններ։ Իրենց արտաքին տեսքով երեք հիմնական խմբերի բաժանվող այս դամբարանները դոգավոր հրվանդանի վրա դասավորված են երեք տարբեր տեղերում[1]։

Քարարկղային խմբին պատկանող դամբարաններից յուրաքանչյուրն ունի կանոնավոր անկյուններով՝ կողքերից 2—4, իսկ ճակատներից մեկական քարերից շարված պատեր, որոնց ծածկի քարերն այժմ չկան։ Քարարկղներն ունեն մեկ մետր 80 սմ-ից մինչև երկու մետր 80 սմ. երկարություն, 80 սմ-ից մինչև մեկ և կես մետր լայնություն և 45 սմ-ից մինչև մեկ մետր խորություն։ Դամբարանները մեծ մասամբ ուղղված են հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք։ Սրանց մի մասը լրիվ, մյուս մասը կիսով չափ լցված են հողով։ Բոլոր դամբարանները կրապատված են հաստ ու ամուր շերտով։ Կրային կարծր շերտի տակ բացվում է ավազի շերտ, իսկ վերջինիս տակ գերեզմանների հատակին՝ սև հողի շերտ, որի մեջ կատարվել է թաղումը։ Տասն և յոթ դամբարաններից բաղկացած քարարկղների ամենամեծ խումբը դասավորված է երկու զուգահեռ շարքերով, իսկ սրանցից 50 մետր հյուսիս և 100 մետր հարավ գտնվող քարարկղների մյուս խմբերը դասավորություն չունեն, խառն են։

Քարարկղների հարավային խումբը կենտրոնում գտնվող դամբարաններից բաժանվում է արևելքից արևմուտք ուղղված բարձր և երկար մեծ թմբով, որը հավանաբար առաջացել է այդտեղ եղած նախկին պարսպի հիմքի մնացորդներից։

Դամբարանների երկրորդ խումբը՝ կրոմլեխները գտնվում են լճի եզերքից 20 մետր, իսկ նախկին ափից՝ 500 մետր հեռավորության վրա։ Կրոմլեխները դասավորված են հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք ձգվող մեկ ուղիղ գծի վրա։ Սրանցից երեքը դեռևս գտնվում էին ջրի տակ, իսկ մեկը կիսով չափ էր ազատվել ջրից։

Կրոմլեխները միմյանցից 1—4 մետր հեռավորության վրա են գտնվում։ Սրանք ունեն տարբեր մեծության շրջաններ (2—5 մետր), որոնց պատերը շրջապատից բարձր են 20—40 սմ-ով։ Ջրի տակից դուրս եկած կրոմլեխների թիվը մեր ստուգման ժամանակ հասնում էր 13-ի։ Դամբարանների 3-րդ խմբի մեջ մտնում են, ճիշտ է թվով քիչ, բայց ժամանակաշրջանով ավելի հին կուրգանները։ Կուրգանային բուրդերը դասավորված են քարարկղների և կրոմլեխների արանքում, բայց ավելի մոտ կրոմլեխներին։ Հրվանդանի վրա ստուգման ժամանակ կար ընդամենը չորս կուրգան։

Վերոհիշյալ դամբարաններից 300 մետր դեպի հարավ, դարձյալ լճի ցամաքած տարածության վրա, այս ու այնտեղ երևում են շենքերի պատերի մնացորդներ, իսկ մեկ տեղ շարվածքը պահպանված է ավելի քան 10 մետր երկարությամբ և 1,5 մետր բարձրությամբ։ Պատը ձգվում է լճից դեպի ցամաք։ Սա նույնպես նման է պարսպի պատի մնացորդի։

* * *

Քարարկղային խմբին պատկանող անվնաս մնացած դամբարաններից պեղել ենք միայն մեկը, իսկ մասամբ կամ կիսով չափ ավերված հինգ դամբարաններից՝ երեքը[2]։

---

1 Դամբարանների ամենամեծ խումբը պատկանում է քարարկղների սիստեմին, որոնք տեղավորված են հյուսիսից հարավ ուղղված գծի վրա երեք տեղով։ Սրանք բացվել են լճի 100—150 մետր հետ քաշվելուց հետո։

2 1951 թվականի հունիսին Մուխան գյուղի բնակիչներ Լևոն Սահակյանը, Սուրեն Շհոյանը, Միհրան Թափրոշյանը, նկատելով լճի ցամաքած տարածության վրա երևացող իրենց համար անսովոր կառուցվածքները, պայթեցնում են առաջին պատահած դամբա-


1
2
3
4
5
6
7
8

Պեղված դամբարանների սրբից գտնված իրեղենները բիչ են, բայց դրանց մեջ կան այնպիսիները, որոնց հիման վրա կարելի է ճշտել դամբարանների հնությունը և որոշ հարցեր։

Այս տեսակետից ուշադրավ են 3-րդ կիսավեր դամբարանում կատարված ստուգողական պեղումները։ Դամբարանը վերջնականապես հողից ազատելուց հետո պարզվեց, որ այնտեղ մնացել էր հս երեք մարդու կմախք։ Դամբարանն ուղղված էր հյուսիս-արևելքից, հարավ-արևմուտք, ուներ 2 մետր երկարություն, 1,1 մետր լայնություն և 74 սմ. խորություն։

Դամբարանի կենտրոնում գտնվող երկու կմախքներից մեկը պառկեցրած էր աջ, մյուսը՝ ձախ կողքի վրա, ոտքերը և թևերը կուչ բերած դրությամբ։ Այստեղ թաղված երրորդ մարդու ոսկորները բացվեցին կենտրոնում գտնվող դույգի ոտքերի կողմում, պպզած դրությամբ։ Եթե հիմք ընդունենք Լևոն Սահակյանի բացատրությունը, նա այս դամբարանից հանել է հս չորս մարդու գանգեր. նշանակում է այստեղ թաղված են եղել 7 մարդ։

Բացի մարդկանց ոսկորներից, այստեղ գտնվեցին նաև ոչխարի երկու տարբեր գանգերի կտորներ և դրանց ոտքերի վերջավորությունները[1]։

Պառկեցրած ննջեցյալների մոտ դրված էր երկուական, իսկ պպզածի մոտ՝ երեք կավամանի։ Կենտրոնում պառկեցրած կմախքներից յուրաքանչյուրի թևերի ոսկորների մոտ գտնվեցին մեկական ապարանջան (տախտակ № 2, նկ. 2 և տախտակ № 3, նկ. 4)[2] ձախ կողքին պառկեցրածի պարանոցի մոտից՝ ագաթից 13 ուլունքներ (լուսանկար № 1, նկ. 6), իսկ աջ կողքին պառկեցրածի ոտքերի արանքում սեղմված էր երկաթե մի դաշույն (տախտակ № 1, նկ. 8)։

Լուսանկար 2

Հարկ համարեցինք վերջնականապես մաքրել նաև չորրորդ և հինգերորդ կիսավեր դամբարանները։ Չորրորդ դամբարանում գտնվեցին մի բանի ուլունքներ և կոտրտված ամանի

բրանը։ Պայթեցված դամբարանի մեջ ըստ Սահակյանի՝ եղել է չորս մարդու կմախք։ Այստեղ գտնվել են կավամանների կտորներ, բրոնզե ապարանջաններ և մեծ քանակությամբ ուլունքներ։ Օգտվելով իրենց համար անսպասելի արդյունքներից, հաջորդ օրը նրանք պայթեցնում են հս չորս դամբարան։ Ավերված դամբարանների ժամանակը որոշելու նպատակով մաքրեցինք դրանցից երեքը և համարակալեցինք բոլոր հինգ դամբարանները ըստ դրանց դասավորման հերթականության, իսկ մեր պեղած անձեռնասա դամբարանը համարակալեցինք որպես № 1։

[1] Ննջեցյալների հետ կենդանիների վերջավորությունները դամբարան դնելու սովորությունը կապված է մագիայի հետ, որը առաջին հազարամյակի առաջին կեսերին (մ. թ. ա.) տարածված էր թե Հայաստանում և թե նրա սահմաններից դուրս։

[2] Գրչանկարները կատարել է թանգարանի նկարիչ Առաքել Պատրիկը, իսկ լուսանկարները՝ Պողոս Գրիգորյանը։

կտորներ, իսկ հինգերորդ դամբարանում բացվեց բանդակազարդ մեկ կովկիթ, գտնվեցին բրոնզե մեկ ապարանջան (տախտակ № 3, նկ. 5) և մի քանի հատ սարդիոնե գնդաձև ու տափակ ուլունքներ (լուսանկար № 1, նկ. 5)։

Անվնաս մնացած դամբարաններից մեր պեղածը ուներ 2,45 մետր երկարություն, 1 մետր լայնություն և 87 սմ. խորություն։ Դա ուղղված էր հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք, հողով լցված էր լրիվ, ծածկի քար չուներ[1] (լուսանկար № 2-ում ցույց է տրված առաջին դամբարանը, պեղելուց առաջ)։

Առաջին դամբարանում թաղված էր 4 մարդ։ Հյուսիսային անկյունում պպզած վիճակում դրված էր երկու մարդու կմախք՝ թևերը ծալած, բռունցքները դեպի ծնոտները. երրորդ կմախքը գանգոսկրի մնացորդների հետ բացվեց դամբարանի արևելյան անկյունում։ Ոսկորների վատ պահպանվածության պատճառով թաղման ձևը որոշել հնարավոր չեղավ։

Չորրորդ կմախքը գանգի մի մասի հետ գտնվեց դամբարանի կենտրոնում։ Թաղված էր ձախ կողքի վրա՝ գլխով հարավ-արևմուտք, ոտքերը և թևերը կծկված դրությամբ. մեջքին ունեցել է բրոնզե գոտի, որն ամբողջապես քայքայված էր։ Սրա թևերի ոսկորներից յուրաքանչյուրի վրա կար բրոնզե մեկական ապարանջան, իսկ աջ ձեռքի մատներից մեկի ոսկորի վրա հագցրած էր ծարիրե ոլորուն ձողից պատրաստած մեկ մատանի։ Ենչեցյալի պարանոցը և դաստակները զարդարված են եղել տարբեր տեսակի ուլունքների շարաններով։ Պարանոցի մոտից հավաքեցինք ոսկու նուրբ թիթեղից պատրաստած մի քանի ուլունքների կտորներ. լավ պահպանված վիճակում գտնվեց մեկ հատ կաղինի (տխիլ) հատիկ։ Հյուսիս-արևմտյան պատի մոտ գտնվեցին բրոնզե նետերի հինգ սլաքներ։ Արևելյան անկյունում թաղվածի մոտից հավաքեցինք մի քանի ուլունքներ (լուսանկար № 1, նկ. 3)։

Վերևում ցույց տրված դամբարանների երրորդ խմբի մեջ մտնող կուրգաններից փորձեցինք պեղել մեկը, որի մոտ գտնվում էր հետ քաշված Սևանի լճի ջրերից մնացած մի փոքրիկ լճակ։ Կուրգանային բուրգն ուներ մեծ և փոքր քարերից կազմված մեկ մետր հաստությամբ շերտ, որը գտնվում է լճի նախկին եզերքից 450 մետր դեպի խորքը։ Կուրգանն իր վրա ուներ կրապատ բարակ զրահ, որը ջարդելը մեծ ջանքեր չպահանջեց, բայց մնացած բարարկղները կրապատված էին շուրջ 20 սմ. հաստության ամուր շերտով։ Կուրգանի վրայից քարերի երկու շերտը հեռացնելուց հետո բացվեց սև գույնի ցեխաշերտ՝ 60 սմ հաստությամբ, իսկ սրա տակ բացվեց բոլորովին սպիտակ հողի մի նոր ցեխաշերտ, որը շարունակում էր իջնել ավելի խոր։ Մեկ և կես մետր խորացնելուց հետո կուրգանի վրա բացված փոսը ջրով լցվեց, որի հետևանքով դադարեցվեց աշխատանքը։

Հաշվի առնելով ստեղծված դժվարությունը, հրաժարվեցինք նաև կրոմլեհները պեղելու մտքից, քանի որ վերջիններս գտնվում էին լճի ջրին ավելի մոտ։

Պեղումների ընթացքում երևան հանված իրերը հիմնականում կարելի է բաժանել երեք խմբի՝ ա) կավամաններ (կերամիկա), բ) զենքեր, գ) արդուզարդի պարագաներ։

Կերամիկայի բնորոշ նմուշներից են՝ փարչ սև գույնի. ունի 23 սմ. բարձրություն, բերանի տրամագիծը՝ 12 սմ. է, իրանի ամենալայն մասի տրամագիծը՝ 15 սմ. ունի մեկ կոպիտ պատրաստված փոքր կանթ, գծազարդ է կանթի մոտ, պատրաստված է ձեռքով, լավ չմաղած կավահողից, գտնված է առաջին դամբարանում (լուսանկար № 3)։

Նույնանման փարչ ծակ դը Մորգանը գտել է Մոսի-Սրում։ Մորգանը իր գտած փարչը նմանեցնում է այժմ գործածվող անկանթ ապակե բաժակներին։ Թվում է, թե այս կավամանն օգտագործված պետք է լինի որպես հեղուկներ չափելու համար։

Կերամիկայի խմբի բնորոշ առարկաներից մեկն էլ № 4 լուսանկարում ցույց տրված կճուճի կեսն է, որի իրանի ամենալայն մասում եղել է երկու կանթ՝ որպես կրակի վրա կախելու հարմարանք։ Ամանը գծազարդ է, առանձնահատկություններից մեկն էլ այն է,

---

[1] Ինչպես այս, այնպես էլ քարարկղային խմբին պատկանող բոլոր դամբարանների շարքերի քարերն այժմ գտնվում են գետնի երեսին դուրս ցցված դրությամբ։ բայց։ ինչպես առհասարակ բոլոր դամբարանների շարքի քարերը։ այնպես էլ սրանք թաղման ժամանակ գտնվել են գետնի կտրվածքի մեջ։ Դարերի ընթացքում ջրի այիքները ողողելով քշել տարել են ոչ միայն դամբարանների շրջապատի փխրուն հողը։ այլև սրանցից շատերի ծածկի քարերը։ որոնք դամբարանների շրջապատում ընկած են դես ու դեռ։

[3] J. de Morgan. Mission Scientifique au Caucase, tome I, Paris, 1889, էջ 150։ նկ. 160։

որ պատերն ունեն անհավասար հաստություն. իրանի ամենալայն մասից ցած՝ պատի հաստությունը հասնում է 1,5 սմ.-ի, իսկ վերին մասում՝ 7 մմ.-ի։ Պատրաստված է ձեռքով, լավ չմաղած կավահողից, պատերի մեջ կան մանր քարեր (լուսանկար № 4)։

Լուսանկար 3

Լուսանկար 4

Նույնատիպ կճուճներ գտնված են Հայաստանի շատ շրջաններում — Ժակ դը Մորգանը՝ Սադախլուի № 104 դամբարանում (կարծում է, որ այն աճյունասափոր է)[1], Երվանդ Լալայանը՝ Լչլաղում[2], 1931 թվականին Կոտայքի շրջանի Նոռնուս գյուղի մոտի դամբարաններից գտնվեցին նույնանման մի քանի կճուճներ (Պետ. Պատմական Թանգարան, գույքամատյան № 517—543 և այլն)։ Նույնանման կճուճներ իր պեղած 42-րդ դամբարանից գտել է Իվանովսկին[3]։ Իրական փաստերը ցույց են տալիս, որ կճուճի այս տեսակը լայնորեն տարածված է եղել Հայաստանում և նրա սահմաններից դուրս։ Հնարավոր է, որ այս տիպի լայնաբերան կճուճները օգտագործվել են ոչ միայն ուտելիքներ եփելու համար։

Կավամանների բնորոշ խմբին է պատկանում առաջին դամբարանում գտնված գծազարդ գավը (լուսանկար № 5). սրա իրանի վերին մասը ծածկված է անկանոն գծերից կազմված սրածայր եռանկյունիներով։ Պահպանված է պտուտակաձև տեսքով մեկ կանթի մի մասը, պատերն ունեն համաչափ հաստություն, պատրաստված է լավ մաղած կավահողից։ Նույնատիպ զարդարանք ունեցող ամանների, որոնք բնորոշ են մ. թ. ա. 8—7-րդ դարերի համար, հանդիպում ենք Գոլովինոյում, Արագածի լանջերում, Սևանի ավազանում, Կիրովականում, Կարմիր բլուրում և շատ այլ վայրերում։ Մուխանում գտնված կավամանների խմբում բնորոշներից մեկը կուրգանից հանված լայնաբերան աղաթասանման ամանն է (լուսանկար № 6, նկ. 1)։ Կավամանների այս տեսակը բնորոշ է Էնեոլիթի շրջանի համար։ Նույն տիպի, բայց ավելի մեծ ամաններ գտնված են Շրեշ բլուրում, Աղավնատնում, Շենգավիթում (լուսանկ. № 6, նկ. 2), Քաղսիում, Էլարում և այլն։

Մեր հետազոտած և պեղած դամբարաններում գտնվել են մեծ մասամբ արդ-ւզարդի

[1] J. de Morgan, Mission Scientifique au Caucase, etudes archeologiques... historiques, Paris, 1889, p. 149, նկ. 156։

[2] Ե. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում. 1931, Երևան, էջ 143, նկ. 74։

[3] А. А. Ивановский—„Материалы по археологии Кавказа", 1911 г., VI, էջ 116։

պարագաներ (բրոնզե ապարանջաններ, մատանիներ, ուլունքներ, օղեր և այլն), մեկ հատ երկաթե դաշույն և նետերի բրոնզե հինգ սլաքներ։

Ապարանջաններն իրենց արտաքին տեսքով բաժանվում են երեք տեսակի։ Առաջին տեսակը սովորական անզարդ ձողերից պատրաստած օղեր են, մի մասը՝ փակ շրջաններով, մյուս մասը՝ բաց (տախտակ № 2, նկ. 2 և տախտակ № 3, նկ. № 4 և 5)։ Երկրորդ տեսակի ապարանջանները, որ մենք անվանում ենք կրկնածալ, անզարդ են և քիչ տարածված (տախտակ № 2, նկ. № 3 և 4)։ Երրորդ տեսակի ապարանջաններն ավելի ծանր են, դրսից ունեն ատամնավոր տեսք, սրանց ծայրերն իրար չեն հասած (տախտակ № 2, նկ. 1 և տախտակ 3, նկ. 3), իսկ մեկի ծայրերը տափակեցված են և հավանաբար վրան փորագրված է եղել օձի գլուխ (տախտակ № 2, նկ. 1)։

Տախտակ N- 1



Սովորաբար ապարանջանի խմբում են դասվում այն լրիվ կամ ոչ-լրիվ շրջան ունեցող օղերը, որոնք իրականում որպես ապարանջան փոքր են, իսկ որպես մատանի՝ մեծ։ Օղերի այս տեսակների վրա երբեմն նկատվում են քանդակներ և, որ կարևոր է, սրանցից մի մասը ավելի ծանր է, քան կրկնակի մեծություն ունեցող ապարանջանները։ Օղերի այս առանձնահատկությունը հիմք է տալիս կարծելու, որ դրանք առաջին հերթին ծառայել են որպես փոխանակման միջոց և հետո միայն զարդ, այն էլ ոչ որպես ապարանջան։ Բրոնզե եղջերուի պարանոցին հագցրած նմանօրինակ օղեր մենք ունենք Միսիանի շրջանի Տոլորս գյուղի մոտ բացված դամբարանից և միջին ու ուշ բրոնզի շրջաններին պատկանող դամբարաններից հանված իրերի խմբում, ինչպես նաև Գոլովինոյում՝ 1950 թվականին մեր կատարած պեղումների ժամանակ (երրորդ դամբարան) և այլ վայրերում հանված իրերի մեջ։

Առաջին դամբարանի իրերի մեջ կա ծարիրե (անտիմոն) ոլորաձև մեկ մատանի (տախտակ № 2,նկ. 7)։ Առաջին հազարամյակի առաջին կեսին պատկանող դամբարաններում համեմատաբար քիչ է պատահում ծարիր, թեև որպես թանկագին մետաղ այն օգտագործման մեջ է եղել նշված ժամանակաշրջանում։ Մարիրե իրեր գտնված են Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանի մի քանի վայրերում։ Իվանովսկին Դեմաբեկում և Խաչենում իր պեղած 28-րդ, 33-րդ և 87-րդ դամբարաններում գտել է ծարիրե տարբեր տեսակի իրեր[1]։ 1935 թ. Կ. Ղաֆադարյանը[2] Կիրովականի «Դիմացի թաղ» կոչվող վայրում իր կատարած պե-

---

[1] А. Л. Ивановский, МАК VI, էջ 105, 115, և 154։

[2] Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Դամբարանների պեղումները Կիրովականում, Հայկական ՍՍՌ-ի ԳԱ Տեղեկագիր № 3—4, 1941, էջ 63։

Suprunuly N 2



Suprunuly N.- 3



զումների ժամանակ № 3 դամբարանից հանեց ծարիրև մեդալիոններ, որոնց մեկ։ երևում արված է խաչի նշան (գույքամատյան № 1236/96)։

Մուխանում պեղված դամբարաններում գտնված իրերի մեջ կան շաղախի, սարդիոնների մի բանի տեսակներից և ագաթից պատրաստած ուլունքներ։ Սարդիոնից պատրաստված ուլունքների մի մասը ծակված են երկկողմանի, որի հետևանքով անցքերը երկու կողմից ձագարաձև են, իսկ ագաթները ծածկված են կարծր մետաղ՝ շաղար կոչվող գործիքի վրա մետաղի ձողն արագ պտտելու միջոցով, որի հետևանքով ուլունքներն ունեն հավասար լայնության անցքեր։ Սպիտակ շաղախից պատրաստված ուլունքներից շատերի վրա կան ոչ թե մեկ, այլ երկու կողմից անցքեր, որոնք խաչաձևվելով խառնվում են իրար ուլունքների կենտրոնում (լուսանկար № 1, նկ. 8)։

Առաջին դամբարանից հանված իրերի մեջ գտնվող բրոնզե նետերի հինգ սլաքներն և նիզակի ծայրը իրենց ձևերով կրկնություն են մինչև այդ Սևանի ավազանում գտնված սլաքների (տախտակ № 1, նկ. 1—5)։

Հնագիտական պեղումներով հաստատված է, որ Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում նիզակները եղել են այնքան երկար, որ քարարկղներում չեն տեղավորվել։

Պրոֆեսոր Բ. Բ. Պիոտրովսկու կարծիքով նիզակներն ամբողջական վիճակում չեն դրվել լամբարանների մեջ, այլ ջարդելուց հետո, կամ թաղվել են միայն դրանց ծայրերը։ Երևանի Լալայանի պեղումներից հայտնի են նիզակի ծայրեր, որոնց փայտերը ջարդված են (Պետ. Պատմական թանգարան, գույքամատյան № 20/52—54)։

Երրորդ դամբարանում գտնված երկաթե դաշույնը որ բավականաչափ լավ պահպանված է, բնորոշ է երկաթի կուլտուրայի սկզբնական շրջանի համար (տախտակ № 1, նկ. 8)։ Նույնանման դաշույն գտնված է Անիպեմզայում (տախտակ № 1, նկ. 7)։ Կա նաև Պետական Պատմական թանգարանում (գույքամատյան № 487 և Լիզգարում[1] (Հյուսիսային Կովկաս) և նույնպես վերագրվում է 7-րդ դարին (մ. թ. ա.)։ Այս դամբարանում գտնվել է նաև բրոնզե նիզակի տերևաձև ծայր, որը նույնպես բնորոշ է մ. թ. ա. 8—7-րդ դարերի համար։

* * *

Նոր Բայազետում, Ծովինարում և Վանի ս. Պողոս եկեղեցում գտնված ուրարտական սեպագիր արձանագրությունների վկայություններից երևում է[2], որ Սևանի ավազանում Վելիբյուխի երկիրը՝ այնտեղ բնակվող ցեղերի (ըստ արձանագրությունների՝ թագավորների) միավորման գործում, ինչպես և իր տերիտորիայի ու ռազմական ուժի տեսակետից. առաջնակարգ տեղ է գրավել։

Կոիվներում փորձված և լավ զինված ուրարտական բանակներն իրենց արշավանքների ժամանակ համառ դիմադրության հանդիպեցին բնիկ ցեղերի կողմից։ Վելիբյուխի երկրի նվաճումով նրանց համար զգալիորեն հեշտանում էր մնացած մանր ցեղերի դիմադրությունն ընկճելը և ամբողջ ավազանի նվաճումը։

Ահա այս երկրի տերիտորիայում են գտնվել վերևում մեր ցույց տված դամբարանների բոլոր տեսակները։ Պետք է ընդունել, որ այդ տարածության վրա գտնվող բնակատեղիի ավերակների մնացորդները նույնպես, քարարկղների և կրոմլեխների հետ միասին, պատկանած պետք է լինեն միևնույն ցեղերին, իսկ կուրգանները՝ մինչև քարարկղների առաջացումն այստեղ բնակվող տոհմերից որևէ մեկին։

Հնագիտական նյութերը և ուրարտական սեպագիր արձանագրությունները վկայում են, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում առաջացել էր այգեգործություն։ Կարմիր բլուրում և Խանլար քաղաքի մոտերքում հայտնաբերված խաղողի, դեղձի, սալորի, նուշի կորիզները հաստատում են սեպագրերում նշված այգեգործության գոյության փաստի մասին։ Դեռ ավելին, Գառնիում կատարված պեղումների ժամանակ Էնոլիթին պատկանող շերտում հայտնաբերված է ծիրանի կորիզ[3]։

---

[1] MAK. VIII, 1900 г. стр 227, табл. XIV. карт. 51։

[2] Պրոֆ. Դր. Ղ. ա ֆ ա ն ց յ ա ն, Նոր-Բայազետի արձանագրություններ։ Երևան, 19։ Նույն արձանագրության մասին տես Հուշարձանների Պահպանության Կոմիտեի 1929 թվականի № 3 տեղեկագիրը և Ակ. И. И. Мещанинов-ի „Стела Сардура в Ване сурп Погос", Изв. АН СССР, VII сер., 1932, № 2, էջ 162։

[3] Բ. Ա ա ա ք ե լ յ ա ն, Գառնի, 1952, Երևան, էջ 25։

Լուսանկար 5

Ինչպես հայտնի է, Սևանի լճի շրջապատի լեռների զգալի մասը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ծածկված է եղել անտառներով, բայց մեր պեղած առաջին դամբարանից գտնված կաղինի միակ հատիկով առաջին անգամ պարզվում է, որ ցույց տրված անտառներում աճել են նաև կաղնի ծառեր։

Առաջին հազարամյակի առաջին կեսին (մ. թ. ա.) նահապետական ընտանիքը տղամարդու գլխավորությամբ հասարակության մեջ հանդիսանում էր գլխավոր օղակը։ Այդ շրջանին պետք է վերագրել ընտանեկան զույգային թաղումները, որ շատ տարածված էին Հայաստանում, այդ թվում նաև Սևանի ավազանում։ Ընտանիքում տղամարդու ունեցած իշխող դիրքը և հանդերձյալ կյանքի մասին տիրող սխալ պատկերացումը մարդկանց հասցրեց այն սովորույթին, «...որի համաձայն կինը պետք է իր ամուսնուն ուղեկցեր դեպի դամբարան և նրա հետ թաղվեր»։[1]

Հիմքեր կան կարծելու, որ երրորդ դամբարանը նույնպես ամուսնական դամբարան պետք է լինի, իսկ «դամբարանատիրոջ» հետ թաղվածները այս ընտանիքին պատկանող ազգակցներներ կամ ստրուկներ։ Խմբային թաղումներին պատկանող դամբարաններ շատ կան Հայաստանում և նրա սահմաններից դուրս։ Երվանդ Լալայանը Սևանի ավազանում (Ղշլաղ, Մրթրի Զոր, Ագեյամաններ, Զաղալու և այլն) կատարած իր պեղումների ժամանակ բացել է խմբային թաղման պատկանող շատ դամբարաններ։ Խմբային թաղման դամբարաններ բացվել են նաև Գոլովինոյի «Խրտանոց» վայրում 1929 թվականի պեղումների ժամանակ և Գոլովինոյում՝ 1950 թվականին, Կիրովականում «Դիմացի թաղ» կոչվող վայրում՝ 1925 թվականին։[2]

Այս բոլոր թաղումները կապված են կամ ընտանեկան թաղման և կամ ազգակցներներին (թերևս ստրուկներին) իրենց տերերի հետ թաղելու սովորույթի հետ։

Մեր ներկայացրած նյութերի նախնական քննությունը հիմք է տալիս պնդելու, որ վերևում թված դամբարաններն իրենց պարունակությամբ վերաբերում են երկու միմյանցից բավականաչափ հեռու ժամանակաշրջանների՝ կուրգանային բուրգերը և նրանցից գտնված իրերը՝ Էնեոլիթին (պղնձե դարին), իսկ բարարկղները (հավանաբար նաև կրոմլեխները)՝ առաջին հազարամյակի առաջին կեսերին (մ. թ. ա.)։

---

[1] Պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկի, Հայաստանի պատմության և կուլտուրայի հնագույն էտապները, Տեղեկագիր № 3—4, 1941, էջ 19։

[2] Կ. Ղաֆադարյան, Դամբարանների պեղումները Կիրովականում, Տեղեկագիր № 3—4, 1941, էջ 59։

Ջարդարանքի խմբում ուլունքները գրավում են ամենաաչքի ընկնող տեղերից մեկը և իրենց գեղեցկությամբ, պատրաստման և ծակելու տեխնիկայով, հղկման և փայլեցման վարպետությամբ, գույների և քարերի տարբերությամբ մեծ հետաքրքրություն են ներկայացնում։ Թեև կասկածներ գտնում է, որ տվյալների անբավարարության պատճառով բաց է մնում ուլունքների տեղական ծագման հարցը[1], փաստերը, սակայն, ցույց են տալիս, որ Երևանը, Կոտայքը, Իջևանի շրջանը, Սևանի ավազանը և այլն ունեն սերդոլիկների մի քանի տեսակներ, իսկ Իջևանը՝ նաև ագաթ։

Լուսանկար 6

Ավելի հավանական չէ՞ր լինի, արդյոք, մտածել, որ Հայաստանի նախաբնիկները օգտագործած կլինեն տեղական սերդոլիկները։ Դրանով կարելի է բացատրել սերդոլիկե ուլունքների մեծաքանակությունը և դրանց պատրաստման, ծակելու, հղկելու, փայլեցնելու տարբերությունները։

Մեր բերած փաստերից և համեմատություններից երևում է, որ Սևանի ավազանի բրոնզի կուլտուրան, որքան էլ այն կրի տեղական ծագման յուրահատուկ կնիքը, այնուամենայնիվ, փոխադարձ շփման մեջ է գտնվել հարևան շրջանների ժամանակակից կուլտուրաների հետ, ազդել է դրանց վրա և ազդվել դրանցից։ Այս նկատվում է դամբարանների կառուցվածքի, իրերի նմանության և պատրաստման տեխնիկայի մեջ։

Այս ամենից հետևում է, որ Սևանի ավազանի բնիկները մեզ հետաքրքրող ժամանակներում տարբեր միջոցներով կապված են եղել հարևան երկրների բնիկների հետ։

Պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին նկատում է, որ «Անդրկովկասի 8—6-րդ դարերի (մ. թ. ա.) կուլտուրան, բացի Առաջավոր Ասիայի երկրների հետ սերտ կապ ունենալուց, փոխհարաբերության մեջ է եղել Հյուսիսային Կովկասի սկյութական կուլտուրայի հետ։ Հնագիտական նյութը միանգամայն պարզորոշ ցույց է տալիս, որ Անդրկովկասը լեռների վրայով կապ է ունեցել ոչ միայն Հյուսիսային Կովկասի այլև մերձդնեպրյան տափաստանների հետ։ Կովկասյան լեռները երբեք անջրպետ պատնեշ չեն հանդիսացել երկու աշխարհների միջև»[2]։

Այն փաստը, որ Սևանի լճի շրջակայքը ծածկված է հնագույն ժամանակներին պատկանող դամբարանների բոլոր տեսակներով, բնակատեղիների, ամրոցների ու քաղաքատեղիների ավերակներով, ուրարտական սեպագրերով և հայկական շրջանին պատկանող հուշարձաններով, ինքնին խոսում է այն մասին, որ Սևանի ավազանը անհիշելի ժամանակներից ի վեր խիտ բնակեցված է եղել։ Հենց բնիկների կողմից էլ ստեղծվել են հայտնաբերված ու պեղված դամբարանները։

«Որ Գոգչայի ափերը,— ասում է Իվանովսկին,— տեսել են բարեդարյան մարդուն, այդ բանի ապացույց են լճի արևմտյան ափերից (հատկապես Ելենովկա և Օրդաքլու գյուղերի միջև) գտնված մեծ քանակությամբ օբսիդաքարերից պատրաստած բերիչները և բարձ մյուս գործիքները»[3]։

[1] Г. Г. Леммлейн. Техника сверления каменных бус из раскопок на Кавказе, кр. сообщ., XVIII, 1947, Москва, стр. 30։

[2] Պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկի։ Նույն աշխատության 22-րդ էջ։

[3] А. А. Ивановский, МАК, VI, 1911, էջ 16։

Հեռավոր անցյալում Սևանի ավազանի խիտ բնակեցված լինելը հիմք է տալիս մտածելու, որ այստեղ հնում եղել են մարդու նյութական միջոցները հայթայթելու պայմաններ, իսկ դա իր հերթին սերտորեն կապված է ավազանի աշխարհագրական դիրքի հետ, դրա չրջապատի գրեթե անմատչելի լեռների և հնում դրանցից շատերի վրա եղած անանցանելի խիտ անտառների, կենտրոնական ճանապարհներից ունեցած հեռավորության (որի հետևանքով և հարձակման ավելի քիչ սպառնալիքի), ձկնեղեն առատ սննդի, որսի մսի և վերջապես երկրի ծայրամասում գտնվելու փաստերի հետ։

Անտարակույս այս բոլոր պայմանները միասին վերցրած դրականորեն են ազդել Սևանի ավազանի բնիկների տնտեսության ու կուլտուրայի զարգացման վրա։ Խիտ բնակությամբ պետք է բացատրել վերևում նշված մեծ թվով հուշարձանների, բոլոր ժամանակներին պատկանող դամբարանների և դամբարանային նյութերի առատությունը։

Մեր ներկայացրած նյութերի հետ կապված կարևոր երևույթներից մեկն էլ լճի տատանումների հարցն է, որի առթիվ օգտակար ենք համարում մի համառոտ ակնարկ անել։

Դեռևս անցյալ դարի առաջին կեսից Սևանի ավազանն արժանացավ տարբեր բնագավառներում աշխատող գիտնականների ուշադրությանը։

1896 թվականին պրոֆ. Անուչինն իր մի հոդվածում, որ լույս տեսավ «Землеведение» 2-րդ գրքի հավելվածում, լճի առաջացումը կապում է ստորերկրյա պրոցեսների հետևանքով գոյացած խորխորատների հետ, ընդգծելով հատկապես հրաբուխների մեծ դերը լճի առաջացման գործում։ Վ. Ա. Օբրուչևը և Մ. Ֆ. Միտտեն լճի առաջացումը կապում են հանգած հրաբուխների խառնարանի հետ. վերջինս գտնում է, որ



Լուսանկար 7

«Գոկչայի լիճը հավանաբար հանդիսանում է երկրաշարժերի հետ հարակցված հրաբխային գործունեության հետևանք։ Հանգած հրաբխային խառնարանում առաջացած ահռելի խորություններ հետզհետե լցվել է շրջակայքի սարերից հոսող մթնոլորտային տեղումների ջրերից, որը որոշել է այդ լճի ջրի տատանումների սահմանը»[1] (ընդգծումն իմն է— Հ. Մ)։

Հետազոտողներից պրոֆ. Ա. Սիվերսը գտնում է, որ Սևանի լճի առաջացումը նոր հրաբխային պրոցեսների շնորհիվ գետերի հունների փակման հետևանք է։

Բայց, ներկա դեպքում, մեզ հետաքրքրողը՝ լճի բազմադարյան տատանումների հետ կապված տեսակետն են ու դրանց դեմ խոսող վերևում մեր ներկայացրած նյութերը։

---

1 М. Ф. Митте. Бассейн Гокчинского озера. Горный журнал, 1891, стр. 358

Որքան մեզ հայտնի է, Սևանի լճի տատանումների վերաբերյալ մինչև այժմ գոյություն ունեցող կարծիքների մեջ միատեսակություն չկա։ Հետազոտողներից շատերը լճի տատանումները կապում են արտաքին պրոցեսների և ներքին երևույթների հետ։ Խոսվում է ստորջրյա աղբյուրների և անցքերի գոյության մասին, այն մասին, որ վերջիններս լճի մեջ գոյացող նստվածքների հետևանքով փակվում են կամ գործում և որ դա իրար ազդում է Սևանի ջրի մակարդակի հորիզոնական տատանումների վրա։ Այլ հեղինակներ տատանումները կապել են Սևանի մեջ թափվող գետերի կամ տեկտոնական պրոցեսների գործունեության հետ, ափերի անտառազրկման և բամբիների ազդեցությունների հետ։ Հետազոտողների մեծ մասը լճի մակարդակի տատանումները կապում է մթնոլորտային տեղումների հետ։

Այդ տեսակետից ուշագրավ են Բ. Ի. Բեկ-Մարմարչևի՝ 1951 թվականին հրատարակած երկու նոր ուսումնասիրությունները։ Այս աշխատությունների մեջ հեղինակը բնության է առնում ինչպես ինքն է ասում, 133 տարիների ընթացքում Սևանի լճի տատանումների հետ կապված հետազոտությունները, դրանց վրա ավելացնում է իր ղեկավարությամբ կատարված երկու արշավախմբերի հետազոտությունների նյութերը և այս բոլորի հիման վրա հանգում է համապատասխան եզրակացությունների։

Լճի մակարդակի տատանումները միջին հաշվով ընդունվում են երեք մետրի սահմաններում։ Բեկ-Մարմարչևը նշում է, որ հարյուրավոր տարիների ընթացքում Սևանի լճի մակերևույթի «...տատանման ամպլիտուդը գտնվում է երեք մետրի սահմաններում»։

Համաձայնելով նախապես հայտնված այն կարծիքներին, որ լճի տատանումները կապված են տեղումների հետ, Բեկ-Մարմարչևը գտնում է, որ «...լճի մակարդակի տատանումների հիմնական պատճառը նրա ավազանի կլիմայական տատանումներն են»։

Հեղինակը պնդում է, որ «վերջին դարերի և նույնիսկ հազարամյակների ընթացքում լճի ափերն ըստ երևույթին չեն ենթարկվել ուղղահայաց խոշոր փոփոխությունների, որոնք կարողանային ջրի հորիզոնական մակարդակի վրա ազդել»։ Քննարկելով նաև հնագիտական հուշարձանները և դրանց վայրերը, նա անում է իր վերջնական եզրակացությունը. «Հետևապես,— ասում է Բեկ-Մարմարչևը,— սրանից 2500—3000 տարի առաջ լճի մակերևույթը գտնվում էր մոտավորապես նույն այն մակարդակի վրա, ինչպիսին ներկայումս է»։

Այսպիսով, Բեկ-Մարմարչևը հետևողականորեն զարգացնում է այն տեսակետը, որ Սևանի լճի տատանումները կապված են մթնոլորտային տեղումների հետ, իսկ տատանումների սահմանը միջին հաշվով կազմում է երեք մետր։ Միաժամանակ նա գտնում է, որ լճի ջուրը վերջին 2.500—3.000 տարիների ընթացքում գտնվել է միևնույն մակարդակի վրա։

Բայց հնագիտական այն նոր նյութերը, որ ձեռք են բերված Սևանի լճի ցամաքած տարածությունում, մի քանի հազար տարի շարունակ գտնվել են ոչ թե երեք, այլ 6—8 մետր խորության մեջ և հենց այս անժխտելի փաստն ինքնին վկայում է, որ լճի տատանումների մասին այդ տեսությունները կարիք ունեն հետագա ստուգման և ճշտման։

Պետք է ենթադրել, որ դարերի ընթացքում Սևանի մակարդակը որոշ պատճառներով անընդհատ բարձրացել է։

Նկատի ունենալով հնագիտական նորագույն տվյալները, պետք է եզրակացնել, որ Հրազդան գետի ակունքները հնում եղել են շատ ցածր, իսկ հետագա դարերի ընթացքում լցվել են բերովի ավազի հաստ շերտերով։ Հետևապես լիճը նույնպես եղել է ցած ու նրա ջրային հայելին ավելի փոքր։ Այդ անվիճելիորեն հաստատվում է ցամաքած տարածության վրա գոյություն ունեցող էնեոլիթյան, առաջին հազարամյակի առաջին կեսերին (մ. թ. ա.) և հայկական միջնադարյան շրջանին վերաբերող դամբարանների ու գերեզմանների գոյության փաստերով։

Նյութական կուլտուրայի՝ վերևում բնութագրված տվյալներից հետևում է, որ հազարամյակներ առաջ մեր ուսումնասիրած դամբարանաղաշտի տեղը եղել է ցամաք և լճի եզերքից հեռու, իսկ լիճը եղել է ավելի փոքր։

Այս տարածության վրա գտնվող երեք հիմնական խմբերի պատկանող դամբարանների

---

[1] Տես А. А. Ивановский, МАК, VI, 1911, стр. 9—10. Б. И. Бек-Мармарчев, Причины колебании уровня озера Севан, Изв. АН Арм. ССР, физ-мат., том IV, № 3, 1951, стр. 191—193.

[2] Б. И. Бек-Мармарчев, Многолетняя кривая колебаний уровня озера Севан, Изв. АН Арм. ССР, физ-мат., том IV, № 1, стр. 69.

[3] Բ. Ի. Բեկ-Մարմարչև, Տեղեկագիր № 3, էջ 200։

[4] Նույն հեղինակ, Տեղեկագիր № 1, էջ 53։

[5] Բեկ-Մարմարչև, Տեղեկագիր № 1, էջ 68։

պությամբ պարզվում են նաև լճի եզերքներում տարբեր ժամանակներում ապրած, իսկ այժմ չրացած տոհմերի, հետագայում նաև ցեղերի կենցաղի ու թաղման սովորությունների հետ կապված մի քանի առանձնահատկությունները, ինչպես նաև այդ ցեղերի նստակեցությունը հաստատող փաստերը։

Դամբարանադաշտի մոտ գտնվող, դարձյալ ջրի տակից դուրս եկած բնակատեղի ավերակների մնացորդներն ինքնին խոսում են այն մասին, որ դրանք պատկանելիս են եղել այն ցեղերին, որոնք ստեղծել են դամբարանների առաջին և երկրորդ խմբերը։

Վստահորեն կարելի է ենթադրել, որ առաջիկա հնագիտական հետազոտությունները և պեղումները լրացուցիչ նոր նյութեր կտան լճի հետ կապված բազմաթիվ հարցեր նոր ձևով լուսաբանելու համար։

Резюме

В октябре 1951 года были произведены раскопки вновь открытого могильного поля на осушенном пространстве озера Севан, недалеко от с. Мухан, Нор Баязетского района.

Первая группа могильных памятников относится к системе каменных ящиков, вторую группу составляют кромлехи, а третью группу—курганы.

Недалеко от этого могильника, также на осушенном пространстве, видны остатки развалин поселения, которые современны первой группе могил, т. е. каменным ящикам. Следовательно, каменно-ящичные могильники принадлежали жителям этого поселения.

Обнаруженный в каменноящичных могильниках железный кинжал характерен для раннего железного века.

По свидетельству урартских клинообразных надписей, найденных в Нор Баязете, Цовинаре и в церкви св. Павла в Ване, доказано, что в давние времена в бассейне оз. Севан, в районе Нор Баязета, находилась страна Великухи—одна из наиболее крупных стран этого района. Раскопанные могилы относятся к одному из племен, населявших страну Великухи.

На основании рассматриваемых материалов, а также устройства могил, можно сделать вывод, что открытые здесь и относящиеся к трем различным группам могилы возникли в результате длительной оседлости коренных жителей и принадлежат к разным периодам. К первой половине первого тысячелетия д. н. э. относятся каменные ящики (вероятно также и кромлехи), а курганы—к энеолиту.

Вопреки господствующему до сего времени мнению можно предположить, что значительная часть раскопанных здесь сердоликовых бус имеет местное происхождение и изготовлена из местного сырья.

Бронзовая культура Севанского бассейна носила определенную печать местного происхождения и находилась во взаимном соприкосновении с современной культурой соседних районов.

Открытые на осушенном пространстве оз. Севан могильники с хорошо датированным археологическим материалом показывают, что исследованные археологические памятники веками находились под водой. Отсюда вытекает, что уровень воды озера в течение нескольких тысяч лет не стоял на одной и той же высоте, а находился в состоянии небольших колебаний в пределах нескольких метров.